ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/141

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՊՍՏՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ.Քոյլոյանի (լիազորագիր տրված՝ 03.06.2020թ.),

Հ.Ղազարյանի (լիազորագիր տրված՝ 03.06.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9700-2020 գրությամբ «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 18.06.2020թ. թիվ 72/265լր գրության հիման վրա, 30.06.2020թ. թիվ 26/26/9700-2020 գրությամբ նախաձեռնել է «Պստո» ՍՊԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Պստո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Պստո» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը 06.04.2020 թվականին հայտարարել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգ, իր կարիքների համար՝ խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգի շրջանակում՝ գնահատող հանձնաժողովի կողմից 30.04.2020 թվականին հրավիրված միաժամանակյա բանակցությունների արդյունքում «ՊՍՏՈ» ՍՊ ընկերությունը ընտրված մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 11; 12; 13; 14; 15; 27; 28; 29; 30; 39; 41; 42; 43; 44; 47; 48; 49; 51; 52; 53; 54; 55; 56; 57; 58; 59; 59; 60 և 61-րդ չափաբաժիններով:

Ընկերության կողմից Ընթացակարգը բողոքարկվել է, որի արդյունքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 19.03.2020 թվականին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/52 որոշմամբ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

01.07.2020 թվականին նախաձեռնվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա

մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն երեք դեպքերն էլ վերաբերում են Ընթացակարգի շրջանակում մասնակիցների կողմից որևէ խախտում թույլ տալուն, որի արդյունքում դադարեցվել է նրա մասնակցությունը կամ որևէ այլ կերպ մասնակցի վարքագծի արդյունքում գնման ընթացակարգի չեղարկմանը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, նախ Պատվիրատուն չի մատանանշել, որևէ իրավական հիմք որի հիման վրա նախաձեռնվել է սույն ընթացակարգը և, որ ամենակարևորն է սույն ընթացակարգը նախաձեռնելու պահին արդեն իսկ 19.03.2020 թվականին՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/52 որոշմամբ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, ուստի առկա չէ մասնակցի այնպիսի վարքագիծ, որը կարող էր առաջացնել Ընկերությանը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընգրկելու իրավական հիմքերից որևէ մեկը»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է մերժել «ՊՍՏՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

«Պստո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/141 ընթացակարգի շրջանակներում 08.07.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.06.2020թ. թիվ 72/265լր գրությամբ հայտնել է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների գնման նպատակով (թղթային ձևով) 2020 թվականի ապրիլի 06-ին հայտարարվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցում (թղթային ձևով):

Գնման ընթացակարգի շրջանակում հայտ են ներկայացրել թվով 10 կազմակերպություն: Գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցներին 19.05.2020թ. էլ. փոստի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սահմանված ժամկետի ավարտին /03.06.2020թ. ներառյալ/ «Պստո» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 01285811) ՀՈԱԿ-ին չի ներկայացրել կնքված պայմանագիրը և ապահովումները:

Հաշվի առնելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալ:

Այնուհետև՝ 18.06.2020թ., թիվ 72/265լր գրությամբ Պատվիրատուն ներկայացրել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Պստո» ՍՊԸ-ի մասնակցության հայտը և հայտնել, որ մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ուղարկված լինելու փաստը հավաստող էլ. փոստի քաղվածքը չի պահպանվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 08.07.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/141 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/141 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***<u>06.04.2020թ.</u>***:

2. Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***<u>06.04.2020թ.</u>***:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս,

ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9700-2020 գրությունը, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 18.06.2020թ. թիվ 72/265լր գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով** ***www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում

պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

3) **գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը**: ...

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝**

1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.

2) հրավերի տեքստը.

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է ***06.04.2020թ.***:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պստո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2020թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Պստո» ՍՊԸ-ն՝ 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 39-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 47-րդ,48-րդ, 49-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ, 60-րդ և 61-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2020թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Պստո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետի ավարտին կնքված պայմանագիր չի ներկայացրել, ուստի՝ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը համապատասխան չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած և որոշվել է Ընկերության տվյալները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ուղարկել լիազորված մարմին:

Այսպես՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.06.2020թ. թիվ 72/294ել գրությամբ տրամադրել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ գնումների պլանը, ինչպես նաև Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***06.04.2020թ.***, այսինքն՝ նույն օրը, մինչդեռ վերոհիշյալ նորմերից բխում է, որ **պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից, հետևաբար՝ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը գնումների պլանը հրապարակելու օրը, այն է՝ 06.04.2020թ., դեռևս օժտված չի եղել գնման հայտը հաստատելու իրավասությամբ:**

Ինչպես նաև Կարգի 21-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումն իրավասու չէր գնման պահանջի ծագման օրը կազմել գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովը, կազմավորվելու արդյունքում, Կարգի 31-րդ կետի համաձայն՝ իրավասու կլիներ հաստատելու գնումների հայտարարության և հրավերի տեքստը, իսկ գնումների համակարգողը իրավասու չէր իրականացնելու Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:**

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է ոչ իրավաչափ, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 20-րդ, 21-րդ և 31-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, ուստի հնարավոր չէ արձանագրել «Պստո» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստիև գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9700-2020 գրությամբ «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**